Ապրանքների ֆիզիկական մատակարարման բացառման կանոններ

Ֆյուչերսների և ֆյուչերսային օպցիոնների դեպքում

Բազային ապրանքների մատակարարում նախատեսող ֆյուչերսային պայմանագրերի դեպքում (*մատակարարում նախատեսող ֆյուչերսային պայմանագրեր*) հաճախորդներն չեն կարող մատակարարել կամ ստանալ տվյալ բազային ապրանքները՝ բացառությամբ որոշակի արժութային ֆյուչերսային պայմանագրերի (տե՛ս ստորև բերված աղյուսակը):

Ֆյուչերսներով և ֆյուչերսային օպցիոններով նախատեսված մատակարարումներից խուսափելու նպատակով հաճախորդները պետք է փոխարինեն ֆյուչերսով նախապես բացված դիրքն առավել երկար մարման ժամկետ ունեցող դիրքով կամ փակեն բաց դիրքը մինչև *դիրքի փակման համար սահմանված ժամկետի ավարտը (Close-Out Deadline)*: Կախված պայմանագրերի տեսակից՝ սահմանվում են դիրքի հարկադիր փակման՝ ստորև ներկայացված աղյուսակում բերված ժամկետները:

Հաճախորդը պարտավոր է տեղյակ լինել *դիրքի հարկադիր փակման համար սահմանված ժամկետից*: Եթե հաճախորդը չի փակում դիրքը մինչև ապրանքների ֆիզիկական մատակարարում նախատեսող ֆյուչերսային պայմանագրով *սահմանված ժամկետի ավարտը*, բրոքերը իրավասու է առանց հաճախորդին նախապես տեղեկացնելու փակել հաճախորդի դիրքը մարման ժամկետով ֆյուչերսային պայմանագրով: Հարկ է նշել, որ դիրքի հարկադիր փակումը չի ազդում գործող պատվերների վրա: Հաճախորդները պետք է միջոցներ ձեռնարկեն գործող պատվերները իրական դիրքերին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Ապրանքների ֆիզիկական մատակարարում նախատեսող ֆյուչերսների քաղաքականությունների հակիրճ նկարագիր

Պայմանագիր	Մատակարարումը թույլատրված է	Դիրքի փակման ժամկետ (*Close-Out Deadline*)
ZB, ZN, ZF (ECBOT)	Ոչ	Տեղեկացման առաջին օրվան (First Notice Day) նախորդող աշխատանքային օրվա բորսայի կանոնավոր առևտրի փակումից 2 ժամ առաջ երկար դիրքի դեպքում (Long) և վերջին առևտրային օրը (Last Trading Day) կարճ դիրքի դեպքում (Short)
ZT (ECBOT), Ճապոնիայի պետական պարտատոմսերի ֆյուչերսներ (JGB)	Ոչ	Առաջին դիրքի օրվան (First Position Day) նախորդող երկրորդ աշխատանքային օրվա ավարտիներկար դիրքի դեպքում (Long) կամ վերջին առևտրային օրվան(Last Trading Day) նախորդող երկրորդ աշխատանքային օրվա ավարտին կարճ դիրքի դեպքում(Short)

EUREXUS ֆյուչերսներ	Ոչ	Առաջին դիրքի օրվան (First Position Day) նախորդող երկրորդ աշխատանքային օրվա ավարտին երկար դիրքի դեպքում (Long) կամ վերջին առևտրային օրը (Last Trading Day) կարճ դիրքի դեպքում (Short)
Բարձր անվանական արժեքով՝ 2 տարի մարման ժամկետով պարտատոմսերի (FTN2) և 3 տարի մարման ժամկետով պարտատոմսերի (FTN3) EUREXUS ֆյուչերսներ	Ոչ	Առաջին դիրքի օրվան(First Position Day) նախորդող երկրորդ աշխատանքային օրվա ավարտին երկար դիրքի դեպքում (Long) կամ վերջին առևտրային օրվան(Last Trading Day) նախորդող օրը կարճ դիրքի դեպքում(Short)
IPE պայմանագրեր (GAS, NGS)	Ոչ	Մատակարարման առաջին մտադրության օրվան (First Intent Day) նախորդող երկրորդ աշխատանքային օրվա ավարտին երկար դիրքի դեպքում (Long) կամ վերջին առևտրային օրը (Last Trading Day) կարճ դիրքի դեպքում
Խոշոր եղջերավոր անասուններ GLOBEX (LE)	Ոչ	Վերջին առևտրային օրվան(Last Trading Day) նախորդող հինգերորդ աշխատանքային օրվա ավարտին երկար և կարճ դիրքերի դեպքում (Long, Short)
GLOBEX NOK, SEK, PLZ, CZK, ILS, KRW և HUF, ինչպես նաև եվրոյի համապատասխան գնանշումներ	Ոչ	Վերջին առևտրային օրվա(Last Trading Day) ավարտից 2 ժամ առաջ
GBL, GBM, GBS (Eurex), CONF (SOFFEX)	Ոչ	–
GLOBEX արտարժութային ֆյուչերսներ (EUR, GBP, CHF, AUD, CAD, JPY, HKD)	Այո	Առաջին դիրքի օրվան(First Position Day) նախորդող հինգերորդ աշխատանքային օրվա ավարտին երկար դիրքի դեպքում (Long) կամ վերջին առևտրային օրը (Last Trading Day) կարճ դիրքի դեպքում (Short)
ET էթանոլ (GLOBEX)	Ոչ	Առաջին դիրքի օրվան(First Position Day) նախորդող աշխատանքային օրվա ավարտին երկար դիրքի դեպքում (Long) կամ վերջին առևտրային օրվան (Last Trading Day)նախորդողաշխատանքային օրվա ավարտին կարճ դիրքի դեպքում (Short)
NG (NYMEX)	Ոչ	Առաջին դիրքի օրվան(First Position Day) նախորդող երկրորդ աշխատանքային օրվա ավարտին կամ վերջին առևտրային օրը (Last Trading Day) (կախված այն բանից, թե որը կլինի առաջինը)երկար դիրքի դեպքում (Long) և վերջին առևտրային օրվան (Last Trading Day)նախորդող երկրորդ աշխատանքային օրվա ավարտին կարճ դիրքի դեպքում (Short)
Բոլոր մնացած պայմանագրերը	Ոչ	Առաջին դիրքի օրվան (First Position Day) նախորդող երկրորդ աշխատանքային օրվա ավարտին կամ վերջին առևտրային օրը (Last Trading Day) (կախված այն բանից, թե որը կլինի առաջինը) երկար դիրքի դեպքում (Long) և վերջին առևտրային օրվան (Last Trading Day) նախորդող երկրորդ աշխատանքային օրվա ավարտին

		կարճ դիրքի դեպքում (Short)

Ապրանքների ֆիզիկական մատակարարում նախատեսող ֆյուչերսային օպցիոնների քաղաքականությունների հակիրճ նկարագիր

Պայմանագիր	Մատակարարումը թույլատրված է	Դիրքի փակման ժամկետ (*Close-Out Deadline*)
Բոլոր մնացած պայմանագրերը	Այո	Օպցիոնները մարվելուն պես կարող են փոխակերպվել ֆյուչերսների (կամ, կորուստով օպցիոնի դեպքում(out-of-the-money), մարվել անարդյունք), եթե տվյալ օպցիոնի մարման ամսաթիվը նախորդում է բազային ֆյուչերսի առաջին դիրքի օրվան(First Position Day): Եթե արդյունքում ձևավորվում է ֆյուչերսային դիրք, այն ենթակա է դիրքի փակման վերոնշյալ ժամկետներին (*Close-Out Deadline*):

- Ֆյուչերսային պայմանագրի մարման (expire) դեպքում գանձվում է սահմանված միջնորդավճար:
- Ֆյուչերսային օպցիոնի իրականացման (exercise) դեպքում գանձվում է սահմանված միջնորդավճար